

2015 թ. Հուլիսի 10-ին « Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի աշխատակիցը և մասնակցային բյուջետային փորձագետ Ղարիբ Հարությունյանը հանդիպումներ ունեցան Արևածագ և Քարինջ համայնքների բյուջեի մոնիտորինգի խմբի անդամների հետ,որի ժամանակ փորձագետը կարևորեց որ ի համայնքներում ձևավորված բյուջեի մոնիտորինգի խումբն ավելի ուշադիր, հետևողական լինի բյուջեի պլանավորման, ֆոնդհայթայթման և հետագա աշխատանքների ընթացքների նկատմամբ, այն ավելի էֆեկտիվ ու արդյունավետ

դարձնելու համար:Հանդիպումների ընթացքում մշակվեց մեթոդաբանությունը խոսվեց առաջիկա անելիքների մասին, բյուջեի մոնիտորինգի գործընթացի ընթացակարգի , հաջորդական քայլերի մասին, որոնք պետք է իրականացվեն: Նմանատիպ հանդիպում արդեն իսկ տեղի էր ունեցել Աքորի , Ախթալա, Ճոճկան համայնքների բյուջեի մոնիտրինգի խմբի անդամների հետ ս/թ հունիս ամսին: Բյուջեի մոնիտորինգի իրականացման հիմնական նպատակն է խթանել մասնակցային գործընթացները, մասնակցային պլանավորմումը, բյուջեի կատարման նկատմամբ հանրային հսկողության իրականացումը և նպաստել ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարմանը:Այս հանդիպումները ինչպես նշել էինք նախկինում կրելու են պարբերական բնույթ և արդեն իսկ մշակված ժամանակացույցին համապատասխան այն իրականացվում է:

Հանդիպումներն իրականացվում են համայնքի բնակիչների հետ համատեղ « Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն»,, ՀԿ-ի կողմից իրականացվող « Համայնքային բյուջեի մոնիտորիգ » ծրագրի շրջանակներում «ՎորլդՎիժն Հայաստան ՄԲԿ»–ի ֆինանսական օժանդակությամբ:



Շարունակվում են հանդիպումները բյուջեի մոնիտորինգ իրականացնող խմբերի հետ

2 / 2